Անձնական համար՝_____ ԱԱՀ՝ _____

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ

Դպրոցական փուլ - 6-րդ դասարան – 120 րոպե

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 1

Հենրիկ Սևան

ԱՂՎԵՍՆ ՈՒ ՎԱԳՐԸ

Մի աղվես բռնեց վագրը մի անգամ։
Աղվեսը ասաց.«Լսի՛ր, բարեկա՛մ,
Աստված ինձ կարգեց գազանների տեր,
Իսկ դու փորձում ես հիմա ինձ ուտե՞լ,
Աստծու զայրույթից աշխարհ շուռ կգա,
Էլ չես ազատվի, երկինքը վկա»։

Վագրը երկյուղից գույն տվեց առավ,
Սիրտը կրծքի տակ մի կում ջուր դառավ։

- Չե՞ս հավատում, հա՞, դե արի, եղբա՛յր,
Այս ձորից դուրս գանք ու մտնենք անտառ,
Կտեսնես՝ ինչպես գազաններն ամեն,
Ինձնից սարսափած հեռու կփախչեն։
- Շատ լավ,- որոշեց վագրը երկյուղից
Ու աղվեսի հետ դուրս ելավ ձորից,
Գայլ, արջ ու հովազ, երբ վագրին տեսան
Գլուխներն առած սարերը փախան։
-Սխալվել եմ ես, ների՛ր ծառայիդ,-
Ասաց ու փախավ վագրը միամիտ։
Սա հին առակ է, բայց միտք ունի խոր,
Ուժի հետ մեկտեղ խելք է հարկավոր։

Անձնական համար՝_____ ԱԱՀ՝ _____

Պատասխանել առաջադրանք 1-ի հարցերին – 6-րդ դասարան

Ինչու՞ էին գազանները փախչում սարերը։

1.Ո՞ր տարբերակը չի համապատասխանում առակի բովանդակությանը.

ա/ Որովհետև ծանոթ էին աղվեսի խորամանկությանը։

բ/Քանի որ անտառում այլևս ուտելիք չկար։

գ/ Գազանները տեսել էին ահեղ վագրին։

2.Ընտրի՛ր ճիշտ պատասխանը՝

Ինչո՞ւ հզոր վագրը հավատաց աղվեսին,

ա/ աղվեսը խոսում էր համոզված ու ինքնավստահ

բ/ վագրը վստահում էր աղվեսին

գ/ վագրը երկյուղում էր Աստծու զայրույթից

3.Գրի՛ր երեք բառ, որոնք բնութագրում են աղվեսին։

4.Ո՞ր միտքն է արտահայտում առակի բարոյախոսությունը

(գրի՛ր առակի համապատասխան տողերը)։

5. Գրի՛ր **երկյուղ** բառի հոմանիշներն ու հականիշները ։

Հոմանիշ հականիշ

6.Գրի՛ր **մի կում ջուր դառնալ, գույն տալ, աշխարհ շուռ գալ** դարձվածքների իմաստը։

7.Ի՞նչ բառերով է առակում աղվեսը դիմում վագրին։

8. Թվի՛ր քեզ ծանոթ առակներ՝ նշելով հեղինակներին։

9. Ի՞նչ հնարքով է ներկայացվում իրական կյանքը առակում։

10.Ի՞նչ կառուցվածք ունի առակը։

Անձնական համար՝_____ ԱԱՀ՝ _____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 2

ԱՍՔ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՄԱՆՈՐԻ ՄԱՍԻՆ

ՀՆՈՑ ԱՎԵՏԱՐԱՆ

Ամանորի շեմին Աստված կանչում է իր հրեշտակներից մեկին ու ասում.

-Գնա Հայոց աշխարհ և շնորհավորիր բոլոր հայերի Ամանորը։

-Իսկ ինչպե՞ս պիտի շնորհավորեմ,- հարցնում է հրեշտակը։

-Ամանորը ժամանակի երազանքաբաշխ սահմանասյունն է,- ասում է Աստված։- Մի տոպրակ երազանք շալակի՛ր և գնա մարդկանց մոտ։ Նայիր բոլորի դեմքերին և մի-մի պտղունց բաշխիր նրանց, ովքեր երազանքի կարիք ունեն։

Հրեշտակը գալիս է Հայոց աշխարհ, չափչփում հյուսիսն ու հարավը, արևելքն ու արևմուտքը, նայում բոլորի դեմքերին և մնում զարմացած։ Ի՞նչ մարդիկ են այս հայերը։ Յուրաքանչյուրի հայացքում այնքան երազանք կա, որ մի պտղունց էլ կարող է նվիրել հրեշտակին։ Զարմանքից շշկլված հրեշտակը որոշում է վերադառնալ երկինք և Աստծուն զեկուցել տեսածի մասին։ Բայց դեռ ոտքը Հայոց աշխարհից չկտրած՝ հրեշտակի ճամփան թակում է մի ծերունի։

-Հայոց մեջ ընդունված չէ հյուրին ձեռնունայն ճամփու դնելը,- ասում է ծերունին և երազանքով լցված մի տոպրակ դնում հրեշտակի ուսին։

Եվ հրեշտակը Աստծու մոտ է վերադառնում երազանքի երկու տոպրակ ուսած։

Այս դեպքից հետո Աստված վճիռ է կայացնում և ամեն Տարեմուտի շեմին Հայոց աշխարհ ուղարկում մի տոպրակ խնդություն ու բերկրանք։ Բայց ահա քանի հազար տարի է անցել, իսկ Աստծու ուղարկած խնդությունն ու բերկրանքը հայերին չի հասնում։ Հավանաբար տոպրակը բերող հրեշտակը մոլորվել է երկնային հեռաստաններում և կորցրել Հայոց աշխարհ բերող ուղին։

Բայց չկարծեք, թե հնարագետ հայերը սպասում են ձեռքները ծալած։ Նրանք ամանորյա խնդություն ու բերկրանք են հյուսում իրենց երազանքից։

Անձնական համար՝_____ ԱԱՀ՝ _____

Պատասխանել առաջադրանք 2-ի հարցերին – 6-րդ դասարան

1.Ինչպիսի՞ տոն է Ամանորը՝ ըստ պատմության բովանդակության, գտի՛ր համապատասխան նախադասությունը և գրի՛ր։

2.Ընտրի՛ր ճիշտ տարբերակները՝
Ինչո՞ւ է Աստված Ամանորին երազանք բաժանում,
ա/ որպեսզի մարդիկ միշտ հավատան հրաշքների
բ/ որպեսզի միշտ խնդություն ու բերկրանք լինի
գ/ որպեսզի աշխարհում պատերազմներ լինեն

3.Տեքստում գտի՛ր Նոր տարի բառակապակցության հոմանիշները, շարքը համալրի՛ր ևս մեկով։

4. Արտահայտի՛ր դիրքորոշումդ, թե ով է արժանի աստվածառաք խնդության։ Ի՞նչ ես անում դու դիմացինիդ խնդություն ու բերկրանք պարգևելու համար։

5.Ո՞րն է հայ մարդու, Հայոց աշխարհի բնութագրական գծերից մեկը՝ ըստ տեքստի(գրի՛ր համապատասխան նախադասությունը)։

6.Գրի՛ր **պտղունց, շշկլվել , ճամփու դնել** բառերի գրական հոմանիշները։

---

7. Ընտրի՛ր ճիշտ տարբերակը՝
Հնարագետ հայերը խնդություն ու բերկրանք են հյուսում՝
ա/ հրեշտակի նվիրած երազանքից
բ/Հայոց աշխարհի գեղեցկությունից
գ/ իրենց երազանքից
8.Ինչո՞վ է Աստծու մոտ վերադառնում հրեշտակը։Այդ դեպքից հետո Աստված ի՞նչ վճիռ է կայացնում՝ըստ տեքստի։

Ընտրի՛ր ճիշտ տարբերակը.
9.Ինչո՞ւ չի իրագործվում Աստծու վճիռը ,
ա/ քանի որ հայերը չեն հավատում հրեշտակին ։
բ/ Աստված բարկացել է և այլևս խնդություն ու բերկրանք չի ուղարկում։
գ/Հավանաբար տոպրակը բերող հրեշտակը մոլորվել է երկնային հեռաստաններում։

10. Մեկնաբանի՛ր «Ամանորը ժամանակի երազանքաբաշխ սահմանասյունն է» միտքը։